ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 նոյեմբերի 2011 թ. թիվ 11/1673/

27. ՀՀ ԳԱԱ բաժանմունքի կանոնադրության մասին

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

Հաստատել ՀՀ ԳԱԱ բաժանմունքի կանոնադրությունը, հաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները /կանոնադրությունը կցվում է/:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է ՀՀ ԳԱԱ նախագահության
2011թ. նոյեմբերի 9-ի
թիվ 11/1673/-27 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ ԳԱԱ բաժանմունքն ակադեմիայի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումն է, որը միավորում է մեկ կամ մի քանի հարակից գիտական բնագավառների գիտնականներին՝ ակադեմիայի անդամներին և ակադեմիայի համապատասխան գիտական ստորաբաժանումների գիտաշխատողներին: Բաժանմունքը ներառում է ակադեմիայի՝ իր ուղղության գիտական, գիտատեխնիկական ինստիտուտները, կենտրոնները և այլ կազմակերպություններ: Բաժանմունքն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերմամբ իր անվանագիր բլանկը:

1.2. Բաժանմունքի հիմնական խնդիրը հիմնարար և կիրառական հետազոտությունների զարգացումն է բաժանմունքում միավորված գիտական ինստիտուտներում, կենտրոններում և այլ կազմակերպություններում: Բաժանմունքն իրագործում է վերջիններիս գիտամեթոդական և գիտակազմակերպական ղեկավարումը, նպաստում է դրանց կադրային կազմի, գիտական բազայի ամրացմանը և աճին, գիտական կապերի հաստատմանը և իրագործմանը:

1.3.Բաժանմունքն իր կազմում կարող է ունենալ գիտական խորհուրդներ (այսուհետև՝ խորհուրդներ), որոնք միավորում են մեկ կամ մի քանի ուղղությունների գծով գիտնականներին: Խորհուրդները խորհրդատվական մարմիններ են և ստեղծվում են համապատասխան բաժանմունքների ընդհանուր ժողովների որոշմամբ: Խորհուրդների անվանացանկի, ստեղծման, վերակազմավորման և լուծարման մասին որոշումները, ինչպես նաև կանոնակարգերը հաստատվում են Ակադեմիայի նախագահության կողմից:

1.4. Բաժանմունքը

- համակարգում է իր կազմում գտնվող գիտահետազոտական ինստիտուտների,

գիտական կենտրոնների, գիտական և գիտաօժանդակ այլ կազմակերպությունների, խորհուրդների գործունեությունը, սահմանում նրանց գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունները.

- նախաձեռնում է հիմնարար և կիրառական հետազոտությունների նոր՝ հեռանկարային ուղղությունների ձևավորումը և զարգացումը բաժանմունքի գիտական կազմակերպություններում.

- իրականացնում է բաժանմունքի գիտական ուղղությունների գծով Հայաստանի Հանրապետությունում կատարվող հիմնարար հետազոտությունների համակարգումը.

- բաժանմունքի գիտական իրավասությունների շրջանակներում կազմակերպում է Ակադեմիայի արտաքին և ներքին փորձաքննական գործառույթների իրականացումը,

- ապահովում է Ակադեմիայի մասնակցությունը ՀՀ կառավարության գիտության համապատասխան ճյուղերի զարգացմանն ու գիտատեխնիկական առաջընթացին առնչվող որոշումների և պետական գիտական ծրագրերի մշակումը, Ակադեմիայի խորհրդատվական պարտականությունների իրականացումը.

- իր խնդիրների իրականացման համար ներկայացնում է առաջարկություններ բաժանմունքի գիտական կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության բուհերի ու ճյուղային ինստիտուտների հիմքի վրա գիտական ու գիտակրթական կենտրոններ ստեղծելու մասին.

- օժանդակում է ավարտված գիտական հետազոտությունների գործնական իրականացմանը, իր կազմի մեջ մտնող գիտական կազմակերպությունների և միջազգային գիտական կենտրոնների միջև համագործակցության հաստատմանն ու ընդլայնմանը.

- նպաստում է բաժանմունքի գիտական հետազոտությունների արդյունքների հրատարակմանը, համապատասխան ակադեմիական հանդեսների բնականոն գործունեությանը.

- կազմակերպում է գիտաժողովներ և գիտական թեմատիկ լսումներ:

2. Բաժանմունքի ընդհանուր ժողովը

2.1. Բաժանմունքի ղեկավարման բարձրագույն մարմինը բաժանմունքի ընդհանուր ժողովն է, որը բաղկացած է տվյալ բաժանմունքում ընդգրկված՝ ակադեմիայի անդամներից և բաժանմունքի գիտական կազմակերպությունների տնօրեններից ու ներկայացուցիչներից:

2.2. Բաժանմունքի ընդհանուր ժողովի նիստեր գումարվում են ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

Բաժանմունքի ընդհանուր ժողովի տարեկան հաշվետու նիստն անցկացվում է նախագահության որոշմամբ՝ հաջորդ տարվա առաջին կիսամյակում:

Բաժանմունքի ընդհանուր ժողովի արտահերթ նիստեր հրավիրվում են բաժանմունքի անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան մեկ երրորդի, ինչպես նաև բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի, Ակադեմիայի նախագահության և Ակադեմիայի նախագահի պահանջով:

2.3. Բաժանմունքի ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունք ունեն նրա բոլոր անդամները, բացառությամբ սույն կանոնադրության 2.9 կետով նախատեսված դեպքի: Ակադեմիայի արտասահմանյան ու պատվավոր անդամները ընդհանուր ժողովի աշխատանքներին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

2.4. Բաժանմունքի ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե նրա նիստերին մասնակցում են ընդհանուր ժողովի անդամների առնվազն երկու երրորդը, բացառությամբ սույն կանոնադրության 2.15 կետով նախատեսված դեպքի:

2.5. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 2.9. կետով նախատեսված դեպքի:

2.6. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, բացառությամբ սույն կանոնակարգի 2.9, 2.15 և 4.1 կետերով նախատեսված դեպքերի:

2.7. Ակադեմիայի անդամները, կարող են լինել միայն մեկ բաժանմունքի կազմում:

Ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների ընտրությունների ժամանակ Ակադեմիայի անդամները վճռական ձայնի իրավունք ունեն միայն մեկ բաժանմունքի ընդհանուր ժողովում:

2.8. Բաժանմունքի ընդհանուր ժողովը՝

1) հաստատում է բաժանմունքում կատարվող գիտական աշխատանքների հիմնական ուղղությունները, քննարկում դրանց կատարման ընթացքը.

2) քննարկում և հաստատում է բաժանմունքի տարեկան հաշվետվությունը.

3) լսում և քննարկում է ակադեմիայի համակարգի և այլ գիտական կազմակերպությունների, առանձին գիտնականների գիտական զեկուցումները.

4) ընտրում է ակադեմիայի անդամության թեկնածուներին՝ ընդհանուր ժողով

ներկայացնելու համար.

5) կազմակերպում է ակադեմիայի գիտական կազմակերպությունների տնօրենների ընտրության գործընթացը.

6) ներկայացնում է առաջարկություններ գիտական կազմակերպությունների ստեղծման, գոյություն ունեցողների վերակազմավորման կամ լուծարման, բաժանմունքի գիտական կազմակերպությունների միջազգային գիտական համագործակցության հիմնական ուղղությունների, ակադեմիական նոր պարբերականների հիմնման վերաբերյալ.

7) որոշումներ է ընդունում Ակադեմիայի անդամների՝ այլ բաժանմունքներից տվյալ բաժանմունք տեղափոխվելու, մրցանակներ, պատվավոր դոկտորի գիտական աստիճան շնորհելու, պատվավոր և արտասահմանյան անդամներ ընտրելու առաջարկությունների վերաբերյալ.

8) առաջարկություններ է ներկայացնում Ակադեմիայի կանոնադրության, այլ կանոնակարգերի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ.

9) քննարկում է Ակադեմիայի կանոնադրության շրջանակներում բաժանմունքի գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

2.9. Ակադեմիայի ակադեմիկոսների թեկնածուների ընտրության ժամանակ բաժանմունքի ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունք ունեն տվյալ բաժանմունքի ակադեմիկոսները:

Ակադեմիայի թղթակից անդամների թեկնածուների ընտրության ժամանակ բաժանմունքի ընդհանուր ժողովում վճռական ձայնի իրավունք ունեն տվյալ բաժանմունքի ակադեմիկոսները և թղթակից անդամները:

2.10. Բաժանմունքների ընդհանուր ժողովներում ընտրված ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների թեկնածուների թիվը չպետք է գերազանցի տվյալ բաժանմունքում համապատասխան թափուր տեղերի թիվը:

2.11. Նախագահության թույլտվությամբ կարող են անցկացվել բաժանմունքների միացյալ ընդհանուր ժողովներ՝ այդ բաժանմունքներին տրված բոլոր ակադեմիկոսների ազատ տեղերի կամ դրանց մի մասի թեկնածուների ընտրության համար:

2.12. Այն դեպքում, երբ հայտարարված մասնագիտությունն առնչվում է տարբեր բաժանմունքներին, ապա թեկնածուի՝ այս կամ այն բաժանմունքում քվեարկվելու որոշումն ընդունում է նախագահությունը:

2.13. Բաժանմունքի առանձին անդամների՝ հարգելի պատճառով բացակայության

դեպքում բաժանմունքի ընդհանուր ժողովին մասնակցող ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների ընդհանուր ցուցակները ճշտվում են ընդհանուր ժողովից առաջ, որից հետո դրանք ներկայացվում են բաժանմունքի բյուրոյի քվեարկությանը:

2.14. Ընտրություններին մասնակցող ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների ցուցակում չեն ընդգրկվում ակադեմիայի բաժանմունքի այն ակադեմիկոսները և թղթակից անդամները, ովքեր ընտրության ժամանակ գտնվում են արտասահմանում: Քվեարկողների ցուցակում չեն ընդգրկվում այն ակադեմիկոսները և թղթակից անդամները, որոնց առողջական վիճակն անհնարին է դարձնում նրանց մասնակցությունը բաժանմունքի ընդհանուր ժողովին:

2.15. Բաժանմունքի ընդհանուր ժողովն իրավազոր է անցկացնելու Ակադեմիայի ակադեմիկոսի թեկնածուների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում են տվյալ բաժանմունքում ընդգրկված ակադեմիկոսների թվի ոչ պակաս, քան երեք քառորդը: Բաժանմունքի ընդհանուր ժողովն իրավազոր է անցկացնելու թղթակից անդամի թեկնածուների ընտրություններ, եթե քվեարկությանը մասնակցում է տվալ բաժանմունքում ընդգրկված Ակադեմիայի անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան երեք քառորդը:

2.16. Ակադեմիայի անդամի թեկնածուների ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Մրցակցության առկայության դեպքում, ըստ անհրաժեշտության, ընտրություններն անց են կացվում մինչև երեք փուլով:

Ակադեմիայի ակադեմիկոսի թեկնածու ընտրված են համարվում այն անձինք, ովքեր ստացել են առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան տվյալ բաժանմունքի քվեարկությանը մասնակցած ակադեմիկոսների թվի երկու երրորդը: Ակադեմիայի թղթակից անդամի թեկնածու ընտրված են համարվում այն անձինք, ովքեր ստացել են առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան տվալ բաժանմունքի քվեարկությանը մասնակցած Ակադեմիայի անդամների թվի երկու երրորդը:

2.17. Ակադեմիայի անդամի թեկնածուների ընտրություններից առաջ բաժանմունքի գիտական խորհուրդները կազմակերպում են ընդլայնված բաց նիստեր, որտեղ առաջադրված թեկնածուները հանդես են գալիս իրենց գիտական գործունեության մասին զեկուցումներով:

2.18. Ակադեմիայի արտասահմանյան և պատվավոր անդամները համարվում են առաջադրված, եթե ընդհանուր ժողովում նրանք ստացել են բաժանմունքի անդամների

ձայների պարզ մեծամասնությունը:

2.19. Բաժանմունքի ընդհանուր ժողովում բաժանմունքի բյուրոյի կազմը, բաժանմունքի գիտահետազոտական ինստիտուտների տնօրենների, բաժանմունքին առընթեր գիտական խորհուրդների նախագահների, բաժանմունքի գիտական ուղղությունների գծով պարբերականների գլխավոր խմբագիրների թեկնածուները քննարկվում և առաջադրվում են բաց քվեարկությամբ, ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Արդյունքները ներկայացվում են Ակադեմիայի նախագահությունը:

3. Բաժանմունքի բյուրոն

3.1. Բաժանմունքի ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում բաժանմունքի աշխատանքները ղեկավարում է բաժանմունքի կոլեգիալ մարմինը՝ բյուրոն, որն ընտրվում է 5 տարի ժամկետով տվալ բաժանմունքի Ակադեմիայի անդամներից, բաժանմունքի գիտահետազոտական կազմակերպությունների տնօրեններից, գիտահետազոտական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Բաժանմունքի բյուրոյի ի պաշտոնե անդամներ են բաժանմունքի ակադեմիկոս–քարտուղարը և բաժանմունքի գիտական քարտուղարը:

3.2. Բաժանմունքի բյուրոյի գործունեությունը գլխավորում է բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը: Ակադեմիկոս-քարտուղարի բացակայության ժամանակ՝ նրա պարտականությունները կատարում է բյուրոյի անդամներից մեկը:

3.3. Բաժանմունքի բյուրոն իրավասու է կայացնելու որոշումներ, եթե նիստին ներկա է բյուրոյի կազմի կեսից ավելին: Բյուրոյի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ բաց քվեարկությամբ, եթե բյուրոն այլ որոշում չի ընդունում:

3.4. Բաժանմունքի բյուրոն

- լսում և քննարկում է բաժանմունքի կազմի գիտական կազմակերպությունների գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ ընթացիկ հաղորդումներ.

- քննարկում և հաստատում է բաժանմունքի կազմի ինստիտուտների գիտահետազոտական թեմաները, գիտական խորհուրդների, այլ խորհուրդների ու հանձնաժողովների գործունեության, առանձին գիտահետազոտական թեմաների կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, հրատարակչական պլանները և հրատարակվելիք աշխատությունների նպատակահարմարությունը և հաջորդականությունը.

- հաստատում է խորհուրդների, բաժանմունքի կազմի գիտահետազոտական կազմակերպությունների գիտական խորհուրդների, գիտական պարբերականների խմբագրական կոլեգիաների կազմերը, բաժանմունքի կազմի մեջ մտնող գիտահետազոտական կազմակերպությունների փոխտնօրեններին և գիտական քարտուղարներին.

- համակարգում է բաժանմունքի ինստիտուտների և այլ գիտական կազմակերպությունների համագործակցությունը, գիտական կապերը և համատեղ ծրագրերը.

- հրավիրում է բաժանմունքի գիտական ուղղությունների գծով գիտաժողովներ, գիտական նստաշրջաններ և կլոր սեղաններ.

- առաջադրում է Ակադեմիայի արտասահմանյան և պատվավոր անդամի, պատվավոր դոկտորի թեկնածուներ.

- լսում և քննարկում է բաժանմունքի կազմի Ակադեմիայի անդամների հաշվետվությունները, նրանց կանոնադրական պարտականությունների կատարման մակարդակը.

- որոշումներ է ընդունում բաժանմունքի և բաժանմունքի կազմի մեջ մտնող գիտական ստորաբաժանումների գիտակազմակերպական հարցերի, ասպիրանտների ընդունելության, արտասահմանյան գործուղումների և ընթացիկ այլ հարցերի վերաբերյալ:

3.5.Բաժանմունքի բյուրոն իր գործունեության համար հաշվետու է բաժանմունքի ընդհանուր ժողովին :

Հերթական ընտրությունների ժամանակ բյուրոն տվյալ բաժանմունքի ընդհանուր ժողովին ներկայացնում է անցած հնգամյա ժամանակաշրջանում իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

4. Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը

4.1. Բաժանմունքի աշխատանքները ղեկավարում է բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը, որն առաջադրվում է բաժանմունքի ակադեմիկոսներից կամ թղթակից անդամներից, ընտրվում բաժանմունքի ընդհանուր ժողովի կողմից՝ 5 տարի ժամկետով, փակ քվեարկությամբ, ժողովում քվեարկությանը մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ, և ներկայացվում է Ակադեմիայի ընդհանուր ժողովի հաստատմանը:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար:

4.2. Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը

- ապահովում է հիմնարար գիտության համապատասխան բնագավառների զարգացման մոտակա և երկարաժամկետ ծրագրերի մշակումը, բաժանմունքի ընդհանուր ժողովին և Ակադեմիայի նախագահությանը ներկայացվող առաջարկությունների նախապատրաստումը, ընդհանուր ժողովի և նախագահության ընդունած որոշումների կատարումը,

- Ակադեմիայի նախագահության նիստերում ներկայացնում է բաժանմունքի իրավասությանը վերաբերվող հարցերը,

- մասնակցում է Ակադեմիայի նախագահության կողմից՝ ըստ բաժանմունքների Ակադեմիայի ակադեմիկոսների և թղթակից անդամների թափուր տեղերի, ֆինանսական և կարևոր նյութական ռեսուրսների բաշխման աշխատանքների, բաժանմունքի իրավասությանն առնչվող այլ հարցերի քննարկմանը,

- կազմակերպում է, բաժանմունքի և նրա բյուրոյի գործունեությունը և ուղղություն տալիս վերջինիս աշխատանքներին,

- ղեկավարում է միջազգային գիտական կապերի կազմակերպումը, հրատարակչական գործունեությունը, գիտական կադրերի պատրաստումը,

- նախագահում է բաժանմունքի ընդհանուր ժողովում և վարում բաժանմունքի բյուրոյի նիստերը

- կատարում է Ակադեմիայի նախագահության և նախագահի հանձնարարությունները:

4.3. Բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը իր գործունեությամբ հաշվետու է բաժանմունքի ընդհանուր ժողովին և Ակադեմիայի նախագահությանը:

5. Բաժանմունքի գիտական քարտուղարը

Բաժանմունքի գիտական քարտուղարի թեկնածությունը առաջադրվում է բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի կողմից :

Բաժանմունքի գիտական քարտուղարը պատասխանատու է բաժանմունքի ընթացիկ աշխատանքների կազմակերպման, բաժանմունքի ընդհանուր ժողովի և բյուրոյի նիստերի նախապատրաստման համար: